«Գավառի ավագ դպրոց» ՎԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Խաղը որպես սովորելու միջոց: Բանավոր խոսքի զարգացումը դերային խաղերի միջոցով»

Հետազոտող ուսուցիչ՝ Սիրուշ Ղանդիլյան

Ղեկավար՝ Գոհար Գուլաբյան

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն …….....3
- Աշխատանքի նպատակը 4
- Աշխատանքի խնդիրները 4
- Աշխատանքի հիմնական դրույթները.....4

1.Խաղը որպես սովորելու միջոց 5
1.1 Խաղերի տեսակները և գործառույթները.....6

2.Բանավոր խոսքի զարգացումը դերային խաղերի միջոցով……..…..7
2.1Բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները.....7
2.2Բանավոր խոսքի զարգացման և դերային խաղի տեղն ու դերը ուսուցման գործընթացում 11
- Դերային խաղի դրական կողմերը 13
- Դերային խաղի առանձնահատկություններն ու առավելությունները 13

3.Աշակերտների խոսքային գործունեության խթանումը խաղերի միջոցով 14
3.1Խաղի կազմակերպման կառուցվածքը 14
3.2Խաղային միջավայրի ստեղծում 14
3.3Խաղի միջոցով ուսուցման նպատակներն ու խնդիրները.....15
3.4Խաղը որպես մոտիվացիա 15
- Մեջբերումներ 16

Եզրակացություն ……..17

Օգտագործված գրականության ցանկ ……..... 19

Ներածություն

«...Ամեն բան, ինչ որ երեխային տրվում է խաղով,
ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝
առանց ձանձրանալու, առանց հոգնելու»
Հովհաննես Թումանյան

Թեմայի ակտուալությունը

«Խաղը որպես սովորելու միջոց: Բանավոր խոսքի զարգացումը դերային խաղերի միջոցով» թեման այժմեական է նրանով, որ աշակերտի խոսքի զարգացումը դպրոցական մանկավարժության կարևորագույն խնդիրներից մեկն է: Խոսքի շնորհիվ է տեղի ունենում դպրոցականի հոգևոր զարգացումը, սոցիալականացումը, ձևավորվում է նրա ներաշխարհը: Մասնավորապես, հաղորդակցման գործառույթը ձևավորվում և զարգանում է կրտսե դպրոցական տարիքում կապակցված խոսքի միջոցով: Կապակցված խոսքը մտավոր գործունեության կարևորագույն ձևն է, այն որոշում է երեխայի մտավոր և խոսքային զարգացման մակարդակը: Բանավոր կապակցված խոսքի տիրապետումը բարենպաստ և օգտավետ պայմաններ է ստեղծում դպրոցական ուսուցմանը նախապատրաստվելիս:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգահեռ աշակերտների առօրյա են թափանցել համակարգչային ժամանակակից խաղեր, ագրեսիա պարունակող մուլտֆիլմեր, որոնք մեծամասամբ չեն ուղեկցվում խոսքային հաղորդակցմամբ: Տարբեր տարիքի երեխաների առօրյան և գործունեության բոլոր ձևերը պետք է ուղեկցվեն խոսքով, որպեսզի երեխաները կարողանան ազատ հաղորդակցվել ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ: Ուսումնասիրությունները փաստում են, որ կրտսեր տարիքում երեխաները լուրջ դժվարություններ են ունենում հաղորդակցման ընթացում,
նրանց խոսքում, համարյա թե բացակայում են հաղորդակցման մշակույթի տարրական նորմերը (մասնավորապես՝ առանց զգացմունքայնության խոսելը, դիմացինին չլսելը և նրա կարծիքը հաշվի չառնելը, խոսքը ոչ գրագետ ձևակերպելը և այլն):

Այժմ մեր իրականության մեջ դժվար է հանդիպել երեխայի կամ երիտասարդի, ով լիարժեք և արժանահավատ կապակցված խոսք ունենա, կարողանա ազատ և գրագետ հաղորդակցվել, հանգիստ, անկաշկանդ ներգրավվել երկխոսության մեջ, այն շարունակել և ավարտին հասցնել, կամ՝ առանց մեծահասակի օգնության որևէ երևույթի մասին մենախոսել, օրինակ՝ նկարագրի, ստեղծագործի, պատմի, վերապատմի, քննարկի և այլն: Կրտսեր

դպրոցական տարիքի երեխաների կապակցված խոսքի զարգացման և շտկման մանկավարժական գործընթացը հասակակիցների հետ համատեղ գործունեության պայմաններում ոչ միայն կնպաստի հաղորդակցման մշակույթի ձևավորմանը, այլև երեխաներին զերծ կպահի համաշխարհային տեղեկատվական բուռն հոսքի արդյունքում ինչպես մայրենի լեզվի այնպես էլ օտար լեզվի կրած վնասներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ `

1.Դերային խաղերի և տեղնոլոգիաների միջոցով զարգացնել կրտսեր դպրոցականների բանավոր խոսքը

2.Խաղի միջոցով աշակերտների մեջ անհրաժեշտ որակներ ձևավորել՝

- բառապաշարի հարստացում
- երևակայության զարգացում
- ստեղծագործական մտքի ձևավորում

3.Տարրական և միջին դպրոցական տարիքի երեխաների ուսուցման ու դասավանդման տարբեր դերերի համադրությամբ նպաստել երեխաների

- երևակայության
- ինքնուրույն մտածողության զարգացման
- աշխարհայացքի ձևավորման

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Ներկայացնել՝

- խաղը որպես սոցիալական հասունացման ուղի
- դերային խաղի միջոցով բանավոր խոսքի զարգացման կարևորությունը
- դպրոցական տարիքին համապատասխան մեթոդների և դերախաղերի ընտրությամբ բանավոր խոսքի ուսուցման առանձնահատկությունները

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.Խաղը որպես սովորելու միջոց

2.Բանավոր խոսքի զարգացումը տարրական դասարաններում դերային խաղերի միջոցով

2.1. Բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները

2.2.Բանավեր խոսքի զարգացման և դերային խաղերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում

1.Խաղը որպես սովորելու միջոց

Խաղը նրա, մանուկ մարդու բնական օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է:
Հ. Թումանյան

Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է, որի ժամանակ երեխաներն ազատ շփվում են իրենց հասակակիցների հետ: Նրանց միացնում են ընդհանուր նպատակը, դրան հասնելու միասնական ջանքերը, ընդհանուր հետաքրքրություններն ու ապրումները: Այդ պատճառով էլ խաղը երեխաներին սովորեցնում է իրենց գործողություններն ու մտքերը ծառայեցնել մեկ ընդհանուր նպատակի, դաստիարակում է նպատակասլացություն, փոխըմբռնում, հարգանք, համբերատարություն, հետաքրքրություն, զիջում: Երեխան սկսում է զգալ իրեն որպես ընդհանուր խմբի անդամ, կարևորված և գնահատված լինել: Կարողանում է արդարացիորեն գնահատել իր և ընկերների գործողություններն ու արարքները: Իսկ դա նշանակում է, որ միջավայրը թուլացնում է երեխայի զգացմունքային լարվածությունը և տրամադրում խաղին: Երեխան դառնում է նախաձեռնող և սոցիալապես ակտիվ: Նույնիսկ ամենապասիվ աշակերտները ինտեգրվում են խաղի մեջ մեծ ցանկությամբ՝ օգտագործելով իրենց ամբողջ ուժերը, որպեսզի խաղի ժամանակ ընկերներից հետ չմնան: Դիտարկելով երեխային խաղի ընթացքում, հետևելով նրա վարքին՝ կարելի է դատել ընտանիքում մեծահասակների հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին:

Դասապրոցեսին խաղային գործունեություն իրականացնելուց առաջ պիտի որոշել խաղի կանոնները և նպատակը, որոնք բխում են ինչպես գործունեության բնույթից, այնպես էլ թեմայից:

Հարկ է նշել, որ խոսքի զարգացման գործընթացն առավելագույն արդյունք է տալիս, երբ ուսուցումն ընթանում է տարբեր խաղերի ձևով, և ընթացքում օգտագործվում են ակտիվ բառապաշարը հարստացնող սյուժետային նկարներ, աշխուժացնող վարժություններ: Իսկ բանավոր խոսքի զարգացմանը նպաստում է հենց դերային խաղը: Խաղի կանոնները որոշելուց հետո պետք է կատարել դերաբաշխում: Դերերը բաշխելիս պետք է նկատի ունենալ ոչ թե այն, թե ով լավ կկատարի այդ դերը, այլ այն, թե տվյալ դերն ինչ դրական ազդեցություն կունենա երեխաների փոխհարաբերությունների վրա: Դերային խաղերի համար կարևոր են նաև մասնակիցների կարողություններն ու հմտությունները, որոնց նրանք տիրապետում են: Դրանք են՝

- հաղորդակցման ունակություն
- խմբում աշխատելու կարողություն
- ղեկավար որակներ
- դիրքորոշումը պաշտպանելու ունակություն
- անընդհատ փոփոխվող պայմաններում գործելու ունակություն և այլն

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ խաղային գործունեության միջոցով երեխան պիտի իր մեջ ավելացնի դրական ու նվազեցնի բացասական որակները: Եվ այս ամենին զուգահեռ դերային խաղերը օտար լեզվի դասաժամերին նպաստում են նաև բանավոր խոսքի զարգացմանը:

1.1Խաղերի տեսակները և գործառույթները

Խաղի յուրաքանչյուր տեսակ բանավոր խոսքի զարգացման հրաշալի միջոց է սովորողների համար: Ուսուցչների խնդիրն է՝ կիրառելով խաղը որպես օտար լեզվի ուսուցման մեթոդ, ծավալել ու ընդլայնել այն՝ միշտ ուշադրության կենտրոնում պահելով դրա դաստիարակչական և ուսումնական նպատակները:

Խաղերի դասակարգման տարբերակ է առաջարկել Ս. Լ. Նովոսյոլովան: Նա դասակարգման հիմք է համարել խաղային գործունեության նախաձեռնությունը, որի հետևանքով առանձնացվել է 3 խումբ.

1. Խաղեր, որոնց նախաձեռնողը երեխաներն են: Դրանք ինքնուրույն և ստեղծագործականբնույթի խաղեր են: Օրինակ՝ գտի՛ր ավելորդը, շարունակի՛ր շարքը, որոնք ձևավորում ենխմբի առանձին առարկաները ընդհանուր անվանման տակ միավորելու, առարկան ըստ «ինչի՞ց է բաղկացած, ի՞նչ է անում» սկզբունքի նկարագրելու ունակություն:
2. Խաղեր, որոնց նախաձեռնողը մեծահասակներն են, դրանք ունեն ընդգծված մանկավարժական ուղղվածություն: Դրանցից են՝ ուսուցողական-ինտելեկտուալ խաղերը: Օրինակ՝ պատկերները դասավորի՛ր ըստ գույնի, ըստ ձևի և այլն:
3. Ժողովրդական խաղեր, որոնք ավանդաբար փոխանցվում են սերնդեսերունդ՝ իրենց մեջ ամփոփելով ազգի ավանդույթներն ու սովորույթները:

2.Բանավոր խոսքի զարգացումը դերային խաղերի միջոցով

2.1. Բանավոր խոսքի զարգացման առանձնահատկությունները

Մարդը ի ծնե օժտված չէ խոսելու ընդունակությամբ: Այն ձևավորվում, զարգանում և կատարելագործվում է քայլ առ քայլ, մարդու զարգացմանը զուգընթաց: Մարդն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում լեզվական հիմնական ընդունակություններ և բառապաշար: Յուրաքանչյուր լեզու ունի իր բառապաշարն ու արտասանությունը:

Խոսքի զարգացման հարցերի գիտական հիմնավորման մեջ մեծ է Ե. Ի. Տիխեևայի աշխատությունների դերը: Նա գտնում էր, որ մայրենի լեզուն ամենամեծ մանկավարժն է, և երեխայի դաստիարակությունը պետք է ընթանա այդ ֆոնի վրա: Նա երեխայի խոսքի զարգացման գործընթացը կապում էր երեխայի անձի զարգացման հետ և գտնում, որ բազմաբնույթ խոսքի կարողությունը հանդիսանում է անձի զարգացման կարևոր և բնութագրական երևույթներից մեկը:

Խոսքի զարգացման մեթոդիկայի բնագավառում մեծ է մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ե.Ա.Ֆլյորինայի դերը: Նրա գիտական հետաքրքրությունները վերաբերում են նախադպրոցական դաստիարակության երկու բնագավառների՝ երեխայի ստեղծագործական մտածողության և խոսքի զարգացում:

Ֆ.Ա. Սոխինը եղել է Ս. Լ. Ռուբինշտեյնի աշակերտը, նա մանկան խոսքի մեծ գիտակ է, լեզվաբան և հոգեբան: Նրա անվան հետ է կապվում մեթոդիկայի զարգացման նոր մակարդակը: Սոխինի մշակած մեթոդական տեսությունը ներառում է հոգեբանական, հոգելեզվաբանական, լեզվաբանական և բուն մանկավարժական հայեցակետեր: Նա ապացուցեց, որ երեխայի խոսքի զարգացումը ունի ինքնուրույն նշանակություն և չպետք է դիտվի որպես շրջապատող աշխարհի հետ ծանոթացման ասպեկտ:

Ըստ Պիաժեի՝ երեխայի զարգացման յուրաքանչյուր փուլ ազդում և առաջ է տանում խոսքի զարգացումը: Այստեղից էլ ելնելով՝ Պիաժեն խոսքի ֆենոտիպ զարգացմանը տալիս է գենետիկական բնույթ: Ըստ նրա՝ երեխայի իմացական

զարգացումը պայմանավորված է ժառանգական կենսաբանական ծրագրով և ընթանում է որոշակի հաջորդական փուլով: Սակայն այդ փուլերը ի հայտ են գալիս և դրսևորվում միայն ի շնորհիվ միջավայրի հետ փոխներգործության: Պիաժեն երեխայի խոսքին տալիս էր էգոցենտրիկ (եսակենտրոն) բնույթ: Ժ. Պիաժեին դեմ է գնացել Լ.Ս. Վիգոտսկին՝ նշելով, որ երեխայի խոսքն ի սկզբանե ունի սոցիալական բնույթ: Ըստ նրա՝ եսակենտրոն խոսքը յուրահատուկ անցման փուլ է հանդիսանում սոցիալական խոսքի և բուն անհատական խոսքի՝ ներքին խոսքի միջև: Այսինքն, ներքին խոսքի զարգացման վրա ազդում է արտաքին խոսքը:

Հայ հասարակական գործիչներն ու մանկավարժները նշում էին, որ մեր ազգին անհրաժեշտ է կրթություն, դաստիարակություն, բարեկարգ դպրոց և ուսման տարածում հայ հասարակության մեջ: 1820-ական թվականներից աստիճանաբար, մեծ դժվարությամբ սկսեցին գործել աշխարհիկ վարժարաններ: Այս շրջանում մանկավարժական, հասարակական լայն գործունեություն են ծավալել Խաչատուր Աբովյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Նիկողայոս Զորոյանը, Ստեփանոս Նազարյանը և այլոք, ովքեր ցանկացած գնով ձգտում էին լուսավորություն տարածել, կրկնապատկել հայկական կրթօջախների թիվը, կրթել և գիտելիքներով զինել ժողովրդին[1]:

Մինչև լեզվին տիրապետելը երեխան անցնում է մինչխոսքային շրջան, որն իր հերթին բաժանվում է նախաթոթովանքի և թոթովանքի փուլերի: Երեխայի հոգեկանի զարգացումը սկսվում է հաղորդակցումից: Այն սոցիալական ակտիվության առաջին տեսակն է, որն ի հատ է գալիս օնտոգենեզում(օրգանիզմի անհատական զարգացում) և որի շնորհիվ նոր ծնված երեխան անհատական զարգացման համար ստանում է անհրաժեշտ տեղեկատվություն: Հաղորդակցման ժամանակ սկզբում ընդօրինակման, այնուհետև բառային հաղորդակցման հիման վրա ձեռք է բերվում երեխայի կյանքի հիմնական փորձը:

[1] Խուգեյան Ա., Վ., Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում, Երևան , 2016, էջ՝ 8:

Գործունեության նոր ձևի ի հայտ գալը և հասակակիցների ու մեծահասակների հետ նոր հարաբերությունների ստեղծումը հանգեցնում է խոսքի ֆունկցիայի և ձևի հետագա տարբերակմանը: Եթե ծնված օրվանից խոսքը կատարում է իր գլխավոր՝ հաղորդակցման ֆունկցիան, ապա սկսած երկու տարեկանից ներեխան սկսում է ճանաչել շրջապատող առարկաները, դրանց միջև եղած կապերը և նմանությունը ու տարբերությունը: Արդեն նախադպրոցական տարիքում ձևավորվում է երեխայի ինտելեկտուալ մտածողությունը:

Տարրական դասարանում հաճախ անհրաժեշտություն է առաջանում բացատրել իր հասակակիցներին խաղի կանոնները. և առաջ է գալիս բացատրական խոսքը: Եվ երեխան պետք է միտքը հաջորդական շարադրի, առանձնացնի իրավիճակի հիմնական կապերը և հարաբերությունները: Կատարելագործվում է երեխայի խոսքի բոլոր կողմերը: Կրտսեր դպրոցական տարիքոմ երեխան խոսքի զարգացման այնպիսի մակարդակի է հասնում, երբ լեզուն, խոսքը դառնում են ոչ միայն հաղորդակցման և աշխարհաճանաչման լիարժեք միջոց, այլև գիտակցական աշխարհընկալման առարկա: Առաջ են գալիս երեխայի խոսքի զարգացման խնդիրները՝

- հնչյունային կուլտուրայի դաստիարակում
- քերականական կողմի ձևավորում
- բառապաշարի հարստացում
- կապակցված խոսքի զարգացում
- գեղարվեստական գրականության հետ ծանոթացում
- լեզվի տարրական երևույթների գիտակցում

Խոսքի զարգացման խնդիրները լուծվում են տարիքային բոլոր խմբերում տարբեր բովանդակությամբ, որը կախված է երեխաների տարիքային առանձնահատկություններից:

Յուրաքանչյուր խնդրի բովանդակությունն ունի իր յուրահատկությունը և ենթադրում է առավել արդյունավետ ուսուցման մեթոդների ընտրություն: Իմանալով, թե տվյալ դասաժամի ընթացքում ինչ խնդիր է իրականացվելու՝ ուսուցիչը նպատակաուղղված ներգործում է խոսքի որոշակի որակների զարգացմանը:

Տարրական դասարանում կապակցված խոսքի զարգացումը հասնում է բավականին բարձր մակարդակի: Հարցերին երեխան հակիրճ և կոնկրետ է պատասխանում, զարգանում է ընկերների պատասխանները գնահատելու, դրանք ուղղելու կամ լրացնելու ունակությունը: Ըստ առաջարկված թեմայի՝ 6-7 տարեկան երեխան կարողանում է կազմել հստակ, տրամաբանված և հաջորդական փոքրիկ պատմություն: Երեխայի համար մենախոսությունը առավել դժվար է, քան երկխոսությունը: Այն ավելի ընդհարձակ է և ներկայացնելու համար պահանջում է լավ հիշողություն, ուշադրություն և իմաստալից խոսք: Մոնոլոգը հիմնվում է մտածողության, տրամաբանության վրա, պատմելու հմտությունը կարևոր դեր է խաղում հաղորդակցման գործընթացում:

Մենախոսությունը կապակցված, տրամաբանական հաջորդականությամբ արտահայտած խոսքն է, որը ժամանակային առումով երկար է և չի ակնկալում լսողի անհապաղ պատասխանը: Այն անհամեմատ ավելի բարդ է: Մոնոլոգ խոսքը ներկայացնելու համար անհրաժեշտ է լավ պատրաստվածություն: Այստեղ կարևոր են ոչ խոսքային միջոցները (օրինակ՝ ժեստեր, դիմախաղ, ինտոնացիա): Մոնոլոգ խոսքի կապակցվածությունը ապահովում է միայն խոսողի կողմից:

«Երկխոսությունը որպես կրտսեր դպրոցականի խոսքային հաղորդակցման ձև» փոխազդեցությունների բարդ ձև է սոցիալական տեսանկյունից: Երկխոսության մեջ մտնելը, երկխոսություն սկսելը շատ հաճախ ավելի բարդ է լինում, քան մենախոսություն կառուցելը և ներկայացնելը: Սեփական խոսքի, հարցերի, պատասխանների շուրջ մտածելը, ձևակերպելը տեղի է ունենում զրուցակցի խոսքի հետ զուգահեռ: Երկխոսությունը մի քանի բարդ ունակություններ է պահանջում.

- լսել զրուցակցին
- ճիշտ ընկալել զրուցակցի միտքը
- սեփական դատողություններն ու մտքերը պատասխանի տեսքով ձևակերպել և արտահայտել
- այն լեզվական միջոցներով ճիշտ և գեղեցիկ ներկայացնել
- պահպանել զգացմունքային որոշակի տոն և առոգանություն
- հետևել լեզվային ձևի ճշտությանը, որի մեջ ձևակերպվում են մտքերը
- լսել սեփական խոսքը, որպեսզի կարողանալ այն վերահսկել

- անհրաժեշտության դեպքում որոշակի ճշտումներ և ուղղումներ կատարել

Դիալոգ հաղորդակցման ձևն ի սկզբանե երեխաներին տրված չէ, իսկ երկխոսությունը տիրապետելն ավելին է, քան ուղղակի խոսքի տիրապետելը:

Տարրական դպրոցում աշակերտի կապակցված խոսքի զարգացումն ու խորացումն իրականանում է գործունեության տարբեր ձևերի՝ խաղի, թեմատիկ երգերի, աշխատանքային գործունեության և խմբային աշխատանքի ընթացքում: Գոյություն ունեն երկխոսությամբ ուղեկցվող բազմաթիվ խաղեր («Гуси-гуси», «В магазине ОДЕЖДЫ/УЧЕБНЫЕ ПРИНАДЛЕЖНОСТИ, ИГРУШКИ» и т.д./, «Мы играем в школу», «Знаю слово только на один звук», «ДА и НЕТ не говори» и т.д.): Այս խաղերը երեխաները շատ են սիրում: Դրանք բավարարում են նրանց զվարճանքը, ուրախությունը: Դրանք հիմք են հանդիսանում համատեղ ուրախ ապրումների, ֆիզիկական փոխհարաբերությունների, զգացմունքային կապերի, խաղային և խոսքային փոխներգործության համար:

2.2.Բանավոր խոսքի զարգացման և դերային խաղերի տեղն ու դերը ուսուցման գործընթացում

Դերային խաղը բանավոր խոսքի զարգացման մեջ կիրառվող և արդյունավետ մեթոդ է: Կրթական ծրագիրը իրականացնելիս, օրինակ, ուսուցիչը աշակերտներին կարող է անակնկալ իրավիճակներ առաջարկել, որում աշակերտները պետք է ընդունեն որևէ դեր, որը անհրաժեշտ է փոձել կատարել և ավարտել: Այն աշակերտները, ովքեր չեն մասնակցում բուն դերային խաղին, հանդես են գալիս որպես դիտորդ և խաղի ավարտից հետո եզրակացություններ անում:

Ուսուցիչը մանրամասն ներկայացնում է իրավիճակի բոլոր նրբությունները: Խաղը հաճախ կառուցվում է տարբեր թեմանրի շուրջ: Այն օգտակար է, երբ փորձ է արվում ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ:

Մեթոդի արդյունավետությունն այն է, որ՝

- ձեռք բերած փորձը պահպանվում է երկար
- այն գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման հետաքրքիր ձև է
- այն հնարավորություն է տալիս աշակերտներին հիմնախնդիրների իրավիճակային դրսևորումները հասկանալ

Միջին դասարաններում դերային խաղի բուն ընթացքից հետո իրականացվում է քննարկում, որի ժամանակ ուսուցիչը.

- հանում է աշակերտներին դերերից
- հստակեցնում է իրենց հետ կատարվածը (կատարում է վերլուծություն)
- քննարկում է նրանց սխալները
- բացահայտում է նրանց դիրքորոշումները, զգացմունքները, փոփոխությունները, որոնք առկա էին բուն դերային խաղի ընթացքում
- աշակերտներին ինքնադիտարկման հնարավորություն է տալիս
- համադրում է դերային խաղի արդյունքները առաջադրված նպատակների հետ
- վերջնաարդյունքների վերաբերյալ վերլուծություններ է իրականացնում
- կատարվում է անդրադարձ
- կապում է դերային խաղը իրական կյանքում հասանելի տեսական նյութերի հետ

Դերային խաղը չափազանց կարևոր է աշակերտների միջանձնային հարաբերությունները, միմյանց հետ համագործակցելու կարողությունները, իրար լսելու և միմյանց խոսքը ըմբնելու և հասկանալու, ինչպես նաև առաջադրված դերը անսխալ կատարելու գործընթացում:

Դպրոցականի համար դերային խաղերը շատ օգտակար և անհրաժեշտ են: Դրանք հնարավորություն են տալիս երևակայական աշխարհում իրական հերոսների պես զգալ, ինչպես նաև դրսևորել աշխուժություն:

Դերային խաղի դրական կողմերը.

•դերային խաղերը առաջ է մղում ինչպես ստեղծագործական, այնպես էլ երևակայական մտածողությունը

- բարելավվում է երեխաների սոցիալական հմտությունները, որի նպաստում է դասարանում խոսելը
- զարգանում է հուզակամային որակները, քանի որ աշակերտը իրեն պատկերացնում և տեսնում է տարբեր կերպարներում
- կենտրոնանում է ներկայացրած պատմության վրա և այն կապում է իրականության հետ
- հնարավորություն են տալիս զարգացնել երեխայի հիշողությունը

Դերային խաղի առանձնահատկություններն ու առավելությունները.

- կանոնների ստեղծում, որոշում և դրանց պահպանում
- խաղերի սոցիալական ուղղվածություն
- հարուստ զգացմունքային գունապնակ
- ստեղծագործելու ունակության զարգացում
- խոսքի զարգացում

3.Աշակերտների խոսքային գործունեության խթանումը խաղերի միջոցով

3.1 Խաղի կազմակերպման կառուցվածքը

3.2 Խաղային միջավայրի ստեղծում

Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու լավագույն տարբերակը: Եվ ամենակարևորը, ինտեգրելով խաղը դասապրոցեսում, այն վերածում ենք ինչպես հաճելի այնպես էլ սպասված զբաղմունքի:

3.3 Խաղի միջոցով ուսուցման նպատակներն ու խնդիրները

1. Նպաստել մտածողության, ստեղծագործական երևակայության, հիշողության, բանավոր խոսքի զարգացմանը
3. Ինքնարտահայտվելու կարողության զարգացում
4. Ազատ և անկաշկանդ շփում հասակակիցների և մեծերի հետ
5. Նախաձեռնելու, համախմբված աշխատելու հմտությունների ձեռքբերում
6. Աշխատասիրության, պատասխանատվության, ուշադրության դրսևորում
7. Գեղագիտական ճաշակի զարգացում
8. Տեսածի, լսածի վերաբերյալ խոսելու կարողություն
9. Իրավիճակը շտկելու կարողություն
10. Բարդույթներից ազատագրում
11. Մրցակցության և էլ ավելի լավ գործելուն ձգտելու կարողություն
12.Մարզել և զարգացնել նրանց մտավոր կարողությունները
13.Մշակել բնավորության լավագույն գծեր,ձևավորել արժեհամակարգ
14.Ձևավորել առողջ մրցակցության դաշտ
15.Ստեղծել հավասարության միջավայր
16.Խրախուսել և նպաստել թիմային աշխատանքի ստեղծմանը

3.4 Խաղը որպես մոտիվացիա

Եթե աշակերտի գործունեության կարևոր և նպատակային ձևը համարվում է խաղը, ապա արդյունավետ է ուսուցումը կազմակերպել հենց այս ձևի ընտրության միջոցով՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին և վերջնարդյունքներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Ուսումնական խաղերի ժամանակ ստեղծվում է մի միջավայր, որտեղ բոլորը՝ անկախ սովորելու ունակություններից, հավասար են: Սովորողի մոտ վերանում է սովորելու, թեմայի չիմացության կամ ոչ լավ իմացության վախը, և բոլորի մոտ ձևավորվում է «ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ, ԵՍ ՆՈՒՅՆՊԵՍ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՄ» սկզբունքը:

Մեջբերումներ

Ջին Հյուսթոնից՝
«Երեխաները կարող են սովորել ամեն ինչ, երբ նրանք պարում են, փորձում են,շոշափում են, տեսնում են և զգում են»

«Ասա ինձ և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, մասնակից դարձրու, և ես կսովորեմ»

«Երեխան, որը չի խաղում, երեխա չէ, իսկ մեծահասակը, որը չի խաղում, կորցրել է այն երեխային, որն ապրում էր իր մեջ»
Պաբլո Ներուդա

Խաղը միշտ իրականացվում է ինքնակամորեն, ներառում է մրցակցության տարրեր, մասնակիցներին հաճույք է պատճառում, օգնում ինքնահաստատվելու
Մուխինա

«Խաղը մեր ուղեղի սովորելու ամենասիրելի միջոցն է»
Դայան Աքերման

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասապրոցեսում խաղը որպես ակտիվ ուսուցման կազմակերպման ձև ակտիվացնում է երեխաներին: Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական բոլոր խնդիրները՝ հատկապես տարրական դասարանում: Խաղային իրավիճակներում երեխան դառնում է առավել գործուն, ուշադիր և մոտիվացված: : Խաղը կոտրում է պասիվությունը: Հետաքրքիր խաղային դասեր կարելի է վարել նաև www.learningapps.org կայքի օգնությամբ:

Հետազոտական աշխատանքի արդիականությունից, նպատակից և խնդիրների լուծումից հանգել եմ հետևյալին, որ դեռ վաղուց խաղը որպես ուսուցման գործիք ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել: Ինչպե՞ս դարձնել դասը հետաքրքիր, գրավիչ, հասնել նրան, որ այն ձևավորի ճանաչողական հետաքրքրություն, աշակերտների ստեղծագործական և մտածողական ակտիվություն, բանավոր խոսքի զարգացում: Դասի կազմակերպման բազմաթիվ հնարքներից աշակերտների մոտ հետաքրքրություն են ստեղծում խաղը և խաղային իրադրությունները, քանի որ դրանք խոսքային գործունեությունը մոտեցնում են կատարելության, նպաստում են զարգացնելու հաղորդակցական հմտություններ (ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզուներով), ապահովում են ուսուցման գործնական ուղղվածությունը: Խաղերը աշակերտների մոտ զարգացնում են հետևողականություն, կենդանություն են հաղորդում դասին, բարձրացնում են առարկան սովորելու հետաքրքրությունը և առավել հեշտ են յուրացնում ուսումնական նյութը:

Բանավոր խոսքը դերախաղի միջոցով զարգացնելու ընթացքում դասավանդման մեթոդներ ու խաղային հնարներ ընտրելիս հանգեցի այն եզրակացության, որ իմ ուսումնադաստիարակչական աշխատանքներում իրականացված խաղերը զարգացրեցին երեխաների՝

- ուշադրությունը
- հիշողությունը
- մտածողությունը
- երևակայությունը
- բանավոր խոսքը:

Միջին դասարաններում դպրոցականները կարողացան հասկանալ և վեր հանել տեքստի գլխավոր իմաստն ու գաղափարը, կատարել մեկնաբանություն՝ հիմնվելով օրինակների վրա: Կատարեցին տեղին և նպատակային հարցադրումներ, ճիշտ եզրահանգումներ, կանխագուշակումներ՝ հենվելով առկայի նյութի վրա:

Դուրս բերեցին համատեքստային բառեր ու աշխատեցին դրանցով, համեմատեցին՝ զուգադրի և հակադրի տեքստերը, տեքստերից սովորած պատկերավորման միջոցները կիրառեցին խոսքում: Հասկացան և մեկնաբանեցին գրական գեղարվեստական կերպարի դերը աշխատանքում:

Կիրառված խաղային մեթոդը լայն հնարավորություն տվեց սովորողին՝ պասիվ վիճակից անցնելու ինքնուրույն և խմբերով համատեղ աշխատանքներ կատարողի, գիտելիք ձեռք բերելու գործընթացի գործուն մասնակցի վիճակին: Ի տարբերություն ուսուցման պասիվ գործընթացի՝ այս դեպքում դասի կենտրոնում սովորողներն էին՝ շեշտադրելով աշակերտակենտրոն ուսուցման վրա, որոնց ներգրավվելով տարբեր առաջադրանքների մեջ, ոչ միայն արդյունավետ կերպով յուրացրեցին ուսումնական նյութը, այլև այդ ընթացքում ձեռք բերեցին ինքնուրույն մտածելու, հաղորդակցվելու, շփվելու, միմյանց լսելու, միմյանցից սովորելու և այլ կարևոր կարողություններ և հմտություններ:

Ուստի ակտիվ խաղային մեթոդներով, բազմաբնույթ գործունեությամբ փորձենք բարձրացնել աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաղորդման շրջանակները, դասը դարձնել հետաքրքիր, կենսուրախ, բովանդակալից ու նպատակաուղղված: Այն ուսուցիչը ով պլանավորում է իր դասը նախապես, ով չի դադարում սովորել՝ ուսումնասիրելով նորը, ով ճիշտ է համադրում խաղն ուսուցման հետ հաջողության է հասնում:

Գրականության ցանկ

- Թորոսյան Կ., «Խաղային մեթոդների օգտագործումը տարրական դասարաններում», «Նախաշավիղ», Երևան, ԿԱԻ, 2016
- Шевелев К. В.- Развивающие игры для дошкольников
- Խուգեյան Ա., Վ., Ավագ նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում, Երևան , 2016:
- Խուգեյան Ա.Վ., Ղազարյան Ա.Մ. Նախադպրոցականի կապակցված խոսքի զարգացման ստեղծագործական խնդիրների լուծման տեսություն տեխնոլոգիան Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Ժ.Ժ. Ռուսոյի 300 ամյակին. Վանաձոր, 2013: